Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. Իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորաման բաժնի առաջատար մասնագետը (ծածկագիր՝ 89-3.2-43)

1) ձևավորում և վարում է հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերի համակարգչային տեղեկատվական բազան և ներկայացնում առաջարկություններ.

2) իրականացնում է Բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, օրենքով սահմանված կարգով վարում է փաստաթղթերի, հանձնաժողովի որոշումների, կարգավորվող անձանց լիցենզիաների, թույլտվությունների, կարգավորվող անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցամատյանները.

3) իրականացնում է կարգավորվող անձանց գործերի վարումը.

4) ներկայացնում է լիցենզիաներում, թույլտվություններում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ.

5) խմբագրում է Հանձնաժողովի իրավական ակտերը.

6) խմբագրում է Հանձնաժողովի ներքին կանոնակարգային փաստաթղթերը.

7) մասնակցում է Հանձնաժողովի փաստաթղթերի խմբագրման սպասարկմանը

8) վարում է Հանձնաժողովի նիստերի և գործակարգավարական խորհրդակցությունների արձանագրությունները.

9) մասնակցում է Հանձնաժողովի ներքին կանոնակարգային փաստաթղթերի մշակմանը՝ խմբագրման մասով.

10) Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

2.Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչեւ 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Ջրային օրենսգրքի, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Լիցենզավորման մասին», «Իրավական ակտերի մասին» «Լեզվի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

3.Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝

«06» «օգոստոսի» 2019թ

5.Աշխատավարձի չափը՝

Մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունինը (150 799) դրամի չափով.

6.Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝
ք.Երևան, Սարյան 22, հեռ.52-53-40-108,118

7.Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջ-ների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,
մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները։
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 10^{00}-ից մինչև 12^{30}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից։

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ (Երևան, Սարյան22, հեռ. 52-53-40-108,118)։